

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ

ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կիպրոսի Հանրապետության կառավարությունը, հաստատելով իրենց ցանկությունը զարգացնելու և ամրապնդելու երկու պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը և ցանկանալով կնքել եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիր, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2 ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի նկատմամբ գանձվող հարկերի առնչությամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտի հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարի կամ եկամտի առանձին տարրերի նկատմամբ գանձվող բոլոր հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների, ձեռնարկությունների վճարած աշխատավարձերի և ռոճիկի ընդհանուր գումարի նկատմամբ գանձվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես՝

ա) Հայաստանի դեպքում՝

(i) շահութահարկ, և

(ii) եկամտահարկ,

(այսուհետ հիշատակվող որպես «հայկական հարկ»),

բ) Կիպրոսի դեպքում՝

i) եկամտահարկ,

ii) կորպորացիաների եկամտահարկ,

iii) Հանրապետության պաշտպանության համար գանձվող հատուկ հարկ, և

iv) կապիտալի հավելաճի հարկ,

(այսուհետ հիշատակվող որպես «կիպրական հարկ»):

4. Սույն Համաձայնագիրը կկիրառվի նաև նույնական կամ էապես նման բոլոր հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն Պայմանավորվող պետություններից ցանկացածի կողմից սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կծանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված էական փոփոխությունների մասին:

Հոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում՝

ա) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները համատեքստից կախված նշանակում են՝ Հայաստան կամ Կիպրոս,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն, իսկ աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է այն տարածքը, ներառյալ՝ ցամաքը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունը՝ ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքին համապատասխան,

գ) «Կիպրոս» տերմինը նշանակում է՝ Կիպրոսի Հանրապետություն, իսկ աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է պետական տարածքը, տարածքային ծովերը, ինչպես նաև տարածքային ծովերից դուրս գտնվող ցանկացած գոտի, ներառյալ՝ սահմանային գոտին, բացառիկ տնտեսական գոտին և մայրցամաքային շelfը, որը Կիպրոսի օրենքներով և միջազգային իրավունքին համապատասխան համարվել կամ այսուհետ կարող է համարվել տարածք, որի նկատմամբ Կիպրոսը կարող է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն իրականացնել,

դ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են՝ համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «Անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

զ) «Ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

է) «Միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում նավով կամ օդանավով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

ը) «Իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

(i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարը կամ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահը կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչները,

(ii) Կիպրոսի դեպքում՝ ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,

թ) «Քաղաքացի» տերմինը նշանակում է՝

(i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

(ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերություն կամ ընկերակցություն, որն իր այդ կարգավիճակը ստացել է Պայմանավորվող պետությունում գործող օրենսդրության հիման վրա,

ժ) «Ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

ի) «Ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների մատուցումը և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի դրույթները կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը:

Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որն այդ Պետության օրենքներով ենթակա է հարկման այդ Պետությունում իր մշտական բնակության, ստեղծման (գրանցման) վայրի, ռեզիդենտության, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման բնույթի չափանիշի հիման վրա, սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետությունում գտնվող աղբյուրներից ստացած եկամտի առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են,

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում, կամ դրանցից և ոչ մեկում չի բնակվում, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է,

դ) եթե նա երկու Պետությունների քաղաքացի է կամ դրանցից ոչ մեկի քաղաքացին չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը:

Հոդված 5 ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ ձեռնարկատիրական գործունեության կայուն վայր, որի միջոցով Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ամբողջությամբ կամ մասամբ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է՝

- ա) կառավարման վայրը,
- բ) մասնաճյուղը,
- գ) գրասենյակը,
- դ) գործարանը,
- ե) արտադրամասը,

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների արդյունահանման, հետախուզման կամ շահագործման ցանկացած այլ վայր:

3. ա) Շինարարական հրապարակը, կառուցապատման, մոնտաժային կամ տեղակայման նախագծերը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը հանդիսանում է մշտական հաստատություն, բայց միայն այն դեպքում, երբ այդ հրապարակը, նախագիծը կամ գործունեությունը շարունակվում է ինն ամսից ավել ժամանակահատվածում:

բ) «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաև ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցումը, ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունները, այդ նպատակով ձեռնարկության կողմից ընդգրկված վարձու աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով, բայց միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը տվյալ երկրում (միևնույն ծրագրի կամ հարակից ծրագրի համար) ցանկացած տասներկուամսյա ժամկետում շարունակվում է ընդհանուր առմամբ վեց ամիսը գերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում՝

ա) շինությունների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես ա)-ից ե) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար:

5. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ այն դեպքում, երբ անձը, որը անկախ կարգավիճակով հանդես եկող գործակալ չէ, որին վերաբերում է 6-րդ կետը, գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող

պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, եթե այդ անձը այդ Պետությունում ունի և սովորաբար իրականացնում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավունք, եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածներով, որը, եթե իրականացվելու լիներ գործունեության կայուն վայրի միջոցով, այդ պարբերության դրույթների համաձայն՝ գործունեության կայուն վայրը չէր վերածի մշտական հաստատության,

6. Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ այն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում բրոքերի, առևտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Այնուամենայնիվ, երբ այդպիսի գործակալի գործունեությունը ամբողջովին կամ գրեթե ամբողջովին իրականացվում է այդ ձեռնարկության անունից, նա չի համարվի անկախ կարգավիճակով գործակալ սույն պարբերության իմաստով:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է դրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

Հոդված 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որն այն ունի այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է խնդրո առարկա գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասուններն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և

բնական այլ պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը կամ օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալությունից կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Պահպանելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում ձեռնարկատիրական գործունեությունից այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեությունից շահույթը որոշելիս թույլատրվում է հանել մշտական հաստատության նպատակներով կատարված փաստացի ծախսերը, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից, դրանք կատարվել են այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլ տեղ:

4. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար միայն ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

5. Նախորդ կետերի նպատակների համար՝ մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի միևնույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

6. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր մասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետի ոչ մի դրույթ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը բաշխման նման ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում պարունակվող սկզբունքներին:

7. Այն դեպքում, երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնք առանձին քննարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակների համար՝ միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից շահույթը ներառում է շահույթ՝

ա) նավերի կամ օդանավերի վարձակալությունից՝ ամբողջական (ժամանակ կամ ուղևորություն) սկզբունքով,

բ) առանց անձնակազմի նավերի կամ օդանավերի վարձակալությունից, և

գ) կոնտեյներների (ներառյալ տրեյլերները, բեռնանավերը և կոնտեյներների տեղափոխման համար օժանդակ սարքավորումները) օգտագործումից, պահպանումից կամ վարձակալությունից:

3. Սույն հոդվածի նպատակների համար՝ միջազգային փոխադրումներում նավերի շահագործումից շահույթը ներառում է նաև նավի անձնակազմի, տեխնիկական կառավարման կամ ինժեներական ծառայություններից ստացված շահույթը:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունի մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման գործում կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունեն Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման գործում կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ այդ ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման կերպ չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխան ձևով հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխան ձևով հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթը համարվում է շահույթ, որը կհաշվեգրվեր առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը պետք է կատարի այդ շահույթի նկատմամբ իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ մյուս Պետությունը գտնում է, որ ճշգրտումն արդարացված է: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պատշաճ ուշադրություն պետք է դարձվի սույն Համաձայնագրի մյուս դրույթներին, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում պետք է խորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10 ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ այդ շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 0 տոկոսը, եթե փաստացի սեփականատերը ընկերության կապիտալում ներդրում կատարելու պահին ներդրել է առնվա-զն 150.000 եվրոյին համարժեք գումար,

բ) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Սույն կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից ստացված եկամուտը այն Պետության օրենքներով, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման՝ ընկերության չբաշխված շահույթի նկատմամբ գանձվող հարկով, եթե նույնիսկ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 ՏՈԿՈՄՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդ տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջացել են՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Չնայած 2-րդ կետի դրույթերին՝ 1-ին կետում նշված ցանկացած տոկոս ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում ստացողը, եթե այդ ստացողը տոկոսի փաստացի սեփականատերն է, և եթե այդ տոկոսը վճարվում է՝

ա) այդ Պետությանը, կամ նրա քաղաքական ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին կամ այդ Պետության՝ կանոնադրությամբ հիմնված մարմնին կամ Կենտրոնական բանկին,

բ) այդ Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմնի կամ այդ Պետության՝ կանոնադրությամբ հիմնված մարմնի կամ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կամ երաշխավորված ցանկացած բնույթի փոխառության դիմաց:

4. «Տոկոս» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ այն բանից, ապահովված են դրանք գրավադրմամբ կամ ունեն պարտապանի շահույթում

մասնակցության իրավունք, թե ոչ, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ՝ այդ արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն Համաձայնագրի նպատակների համար որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Նման դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ այն փաստից, թե Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է պարտքը, որի նկատմամբ պետք է տոկոսներ վճարվեն, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև՝ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Նման դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթներին:

Հոդված 12 ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդ թոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, բայց եթե ստացողը թոյալթիների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի թոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Թոյալթիներ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում՝ գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների, ներառյալ՝ կինոնկարների կամ ռադիո- կամ հեռուստահաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի, սկավառակների կամ ձայներիգների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման դիմաց, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության օգտագործման դիմաց:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե թոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են թոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում են թոյալթիները, փաստացի կապված են այդ մշտական հաստատության հետ: Նման դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) դրույթները:

5. Թոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Այնուամենայնիվ, երբ թոյալթիներ վճարող անձը, անկախ այն փաստից, թե Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, թե ոչ, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է թոյալթիներ վճարելու պարտավորությունը, և այդ թոյալթիների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը, ապա այդ թոյալթիները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող թոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև՝ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են

միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Նման դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթներին:

Հոդված 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտները, որոնք ստացվել են մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) հիշատակված անշարժ գույքի օտարումից, որը գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի օտարումից առաջացած հավելաձր, ներառյալ՝ այդ մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) օտարումից առաջացած հավելաձր, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի կամ օդանավերի, կամ այդ նավերի կամ օդանավերի շահագործմանն առնչվող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաձր ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության այն բաժնետոմսերի օտարումից ստացված արժեքի հավելաձր, որոնց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաձր ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է օտարող անձը:

Հոդված 14

ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պահպանելով 15-րդ (Տնօրենների հոնորարներ), 17-րդ (Կենսաթոշակներ) և 18-րդ (Պետական ծառայություն) հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդ վարձու աշխատանքը չի

իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում տվյալ ֆինանսական տարում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում,

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի կամ օդանավի վրա իրականացված վարձու աշխատանքի դիմաց տրված վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ համանման մարմնի անդամ ստացած տնօրենների հոնորարները և համանման այլ վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 16

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Անկախ 7-րդ (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) և 14-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության գործիչը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչ կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի,

ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) և 14-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ արվեստի գործչի կամ մարզիկի կողմից Պայմանավորվող պետությունների կառավարությունների կողմից համաձայնեցված կամ ամբողջությամբ կամ հիմնականում առաջինը հիշատակված Պետության հասարակական հիմնադրամների, քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից օժանդակված, շահույթ չհետապնդող մշակութային կամ մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում իրականացված 1-ին կետում հիշատակված գործունեությունից ստացված եկամուտն ազատվում է հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում են այդ գործունեությունը:

Հոդված 17 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարվող կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Անկախ 1-ին կետի դրույթներից՝

ա) Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմինների կողմից կամ վերջիններիս կողմից ստեղծած հիմնադրամներից ֆիզիկական անձին վճարվող ցանկացած կենսաթոշակ՝ այդ Պետությանը կամ քաղաքական ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց, ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Այնուամենայնիվ, այդ կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ և քաղաքացի:

ՀՈԴՎԱԾ 18 ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից կամ վերջիններիս կողմից ստեղծված հասարակական հիմնադրամներից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարվող՝ կենսաթոշակից

տարբերվող վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Այնուամենայնիվ, այդ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և այդ անձը այդ Պետության ռեզիդենտ է, որը`

(i) այդ Պետության քաղաքացին է, կամ

(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ` բացառապես այդ ծառայությունները մատուցելու նպատակով:

2. 14-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) և 15-րդ (Տնօրենների հոնորարներ) հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների նկատմամբ:

Հոդված 19 ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես նախքան Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ վերապատրաստման նպատակով, չի հարկվում այդ Պետությունում իր կեցության, ուսման կամ վերապատրաստման համար ստացված վճարումների առնչությամբ` պայմանով, որ այդ վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Ուսանողին, պրակտիկանտին կամ փորձնակին, հանգամանքներից կախված, մյուս Պայմանավորվող պետությունում մատուցված ծառայությունների դիմաց վճարված վարձատրությունը ենթակա չէ հարկման այդ Պետությունում 4 տարվա ընթացքում` պայմանով, որ այդ ծառայությունները կապված լինեն իր ուսման կամ վերապատրաստման հետ:

Հոդված 20 ԴԱՍԱԽՈՍՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

1. Անձը, ով հանդիսանում է կամ անմիջապես նախքան Պայմանավորվող պետություն այցելելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը որևէ համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ Պայմանավորվող պետության կառավարության կողմից ճանաչված շահույթ չհետապնդող ուսումնական համանաման այլ հաստատության հրավերով գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում երկու տարին չգերազանցող ժամանակահատվածով` բացառապես դասավանդելու կամ հետազոտելու

նպատակով կամ միաժամանակ այդ երկու նպատակներով, այդ մյուս Պայմանավորվող պետության ուսումնական հաստատությունում կազատվի հարկումից՝ դասավանդելու կամ հետազոտելու դիմաց իր վարձատրության առնչությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն վերաբերում հետազոտությունից ստացվող եկամտին, եթե այդ հետազոտությունն իրականացվում է ոչ թե հասարակական, այլ որևէ անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 21

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի այն տեսակները, որոնք չեն հիշատակվել սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում այն եկամտի նկատմամբ, որոնք 6-րդ հոդվածի (Եկամուտ անշարժ գույքից) 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամուտ չէ, եթե այդ եկամուտը ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ ստացվել է եկամուտը, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) դրույթները:

Հոդված 22

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, առաջինը հիշատակված Պետությունը թույլ է տալիս նվազեցնել այդ ռեզիդենտի եկամտի նկատմամբ գանձվող հարկը՝ այդ մյուս Պետությունում վճարվող եկամտահարկին համարժեք գումարով: Այդ նվազեցումը, այնուամենայնիվ, չպետք է գերազանցի մինչև նվազեցումը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը վերագրելի է այն եկամտին, որը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտն ազատվում է հարկումից այդ Պետությունում, ապա այդ Պետությունը, համենայն դեպս, կարող է այդ ռեզիդենտի եկամտի մնացած մասի նկատմամբ գանձվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը:

Հոդված 23
ԽՏՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները չպետք է ենթարկվեն մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ ռեզիդենտության առնչությամբ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության քաղաքացիները: Անկախ 1-ին հոդվածի (Ընդգրկված անձինք) դրույթներից՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտ են, չպետք է ենթարկվեն Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ Պետության քաղաքացիները միևնույն հանգամանքներում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պետությունում, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս Պետության ձեռնարկության հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի իբրև պարտավորեցնող Պայմանավորվող պետությանը՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրել այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք այդ Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի (Փոխկապակցված ձեռնարկություններ) 1-ին, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 7-րդ կամ 12-րդ հոդվածի (Ռոյալթիներ) 6-րդ կետերի դրույթները՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթիները և այլ վճարումները, այդ ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, ենթակա են համան նույն պայմաններով, ինչպես դա կարվեր առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտներին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է այդ մյուս Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների

կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պահանջների, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջները, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջին հիշատակված Պետության համանման այլ ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի (Ընդգրկված հարկեր) դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ՝ բացառությամբ՝ անուղղակի հարկերի:

Հոդված 24

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից անկախ, նա կարող է իր հայցը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմին, որի ռեզիդենտն է հանդիսանում կամ, եթե իր հայցը վերաբերում է սույն Համաձայնագրի 23-րդ հոդվածի (Անխտրականություն) 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմին, որի քաղաքացին է հանդիսանում: Հայցը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը հայցը կհամարի հիմնավորված և եթե չկարողանա հասնել բավարարող լուծման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառել սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն պետք է կատարվի՝ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությամբ սահմանված ժամկետային սահմանափակումներից անկախ:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կձգտեն լուծել բոլոր դժվարություններն ու կասկածները, որոնք կարող են առաջանալ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև Համաձայնագրով չնախատեսված դեպքերում միմյանց հետ խորհրդակցել՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի հետ կապված համաձայնության հասնելու նպատակով: Երբ նպատակահարմար է համարվում համաձայնության հասնել կարծիքների բանավոր փոխանակման միջոցով, այդ

փոխանակումը կարող է տեղի ունենալ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված Հանձնաժողովի միջոցով:

Հոդված 25

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք ենթադրաբար կարևոր են սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար կամ ներքին օրենսդրության կառավարման կամ կիրարկման համար՝ ցանկացած տեսակի և նկարագրության հարկերի մասով, որոնք գանձվում են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի անունից, այն չափով, որ չափով հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի՝ այնպես, ինչպես և այդ Պետության ներքին օրենսդրությամբ ստացված տեղեկությունները, և բացահայտվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ՝ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատման կամ գանձման, դրանց առնչությամբ հարկադիր բռնագանձման կամ դատական հետապնդման կամ բողոքարկումների քննման գործընթացներին, կամ դրանց վերահսկմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունները կօգտագործեն միայն այդ նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել՝ իբրև Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) տեղեկություններ տրամադրելու նպատակով իրականացնել վարչական միջոցառումներ, որոնք հակասում են այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործելակերպին,

բ) ներկայացնել տեղեկություններ, որոնք հասանելի չեն այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ բնականոն վարչարարության ընթացքում,

գ) ներկայացնել տեղեկություններ, որոնք կբացահայտեն ցանկացած առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ այնպիսի տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե սույն հոդվածի դրույթների համաձայն մի Պայմանավորվող պետության կողմից տեղեկություններ են հայցվում, մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ հավաքելու իր միջոցները՝ հայցվող տեղեկությունները ձեռք բերելու համար, նույնիսկ եթե այդ մյուս Պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդ տեղեկությունների կարիքը: Նախորդ նախադասությունում պարունակվող պարտավորությունը ենթակա է սահմանափակման 3-րդ կետով, բայց այդ սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ թույլ տան Պայմանավորվող պետությանը՝ մերժելու տեղեկությունների տրամադրումը՝ բացառապես այն պատճառով, որ այն չունի այդ տեղեկությունների նկատմամբ ներքին շահագրգռվածություն:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ թույլ տան Պայմանավորվող պետությանը՝ մերժելու տեղեկատվության տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկությունները պատկանում են բանկի, ֆինանսական այլ հաստատության, նշանակված անձի կամ գործակալությունում աշխատող անձի կամ վստահված անձի, կամ այն պատճառով, որ դրանք վերաբերում են անձի սեփականության շահերին:

Հոդված 26

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

Հոդված 27

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կծանուցի մյուսին սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար իր օրենքով պահանջվող ընթացակարգերի ավարտի մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այդ ծանուցումներից վերջինի ստացման օրվանից, և նրա դրույթները կգործեն՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

ii) եկամուտի նկատմամբ այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Հոդված 28
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետություններից որևէ մեկի կողմից դադարեցնելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագիրը՝ ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարի հետո՝ ցանկացած ժամանակ, օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցելով: Նման դեպքում Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը՝


i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումն ուղարկելու օրացուցային տարվա ավարտից հետո վճարված կամ հաշվանցված գումարների համար, և

ii) եկամուտի նկատմամբ այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցումն ուղարկելու օրացուցային տարվանից հետո սկսվող գնահատման տարիների համար:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է ք. Երևան 2011 թվականի հունվարի 17-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, հունարեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և հունարեն տեքստերի միջև մեկնաբանության տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ



ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Համաձայնագրի ստորագրման պահին երկու կողմերը համաձայնեցին, որ սույն Արձանագրությունը կազմում է Համաձայնագրի անբաժանելի մասը՝

25-րդ հոդվածի (Տեղեկությունների փոխանակում) մասով՝

1. Պահանջող Պայմանավորվող պետությունը, 25-րդ հոդվածի համաձայն տեղեկություններ հայցելու դեպքում հայցվող տեղեկությունների ենթադրելի կարևորությունը ապացուցելու նպատակով պետք է տրամադրի հետևյալ տեղեկությունները՝

ա) հետախուզման կամ քննության մեջ գտնվող անձի ինքնությունը,

բ) հայցվող տեղեկության վերաբերյալ տեղեկանք՝ ներառյալ դրա բնույթը և այն ձևը, որով հայցող Պայմանավորվող պետությունը ցանկանում է ստանալ տեղեկությունները հայցվող Պայմանավորվող պետությունից,

գ) հարկային տեսանկյունից փնտրվող տեղեկատվության նպատակը,

դ) հիմքեր՝ ենթադրելու, որ հայցվող Պայմանավորվող պետությունը տնօրինում է հայցվող տեղեկությունները կամ դրանք պատկանում են կամ հայցվող Պայմանավորվող պետության իրավասության շրջանակներում գտնվող անձին վերահսկվում են նրա կողմից,

ե) այնքանով, որքանով հայտնի է՝ այն անձի անունն ու հասցեն, ով ենթադրվում է, որ տնօրինում է հայցվող տեղեկությունը,

զ) տեղեկանք, առ այն, որ հայցը համապատասխանում է հայցող Պայմանավորվող պետության օրենսդրությանը և վարչարարական գործելակերպին, որ եթե հայցվող տեղեկությունը գտնվեր հայցող Պայմանավորվող պետության իրավասության շրջանակում, ապա հայցող Պայմանավորվող պետության իրավասու մարմինն ի վիճակի կլիներ տեղեկությունը ստանալ հայցող Պայմանավորվող պետության օրենքներին կամ վարչարարական գործելակերպին համապատասխան, և որ հայցը համապատասխանում է սույն Համաձայնագրին,

է) տեղեկանք, առ այն, որ հայցող Պայմանավորվող պետությունն ամբողջությամբ սպառել է իր սեփական տարածքում առկա բոլոր միջոցները այդ


տեղեկությունները ստանալու համար՝ բացառությամբ այն միջոցները, որոնք կարող են առաջ բերել մեծ դժվարություններ:

2. Պայմանավորվող պետության կողմից հայցվող տեղեկությունները չպետք է տրամադրվեն, քանի դեռ հայցող Պետությունը չունի փոխադարձ դրույթներ և/կամ չի կիրառել համապատասխան վարչարարական գործելակերպը՝ հայցվող տեղեկությունների տրամադրման համար:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է ք. Երևան 2011 թվականի հունվարի 17-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հունարեն, հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և հունարեն տեքստերի միջև մեկնաբանության տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ



ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

